


ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԲԱՐԻ ՋՍԿԱՆ

Կեանքիդ ժամանկը ապրե՛ այնպէս, որ քեզի բաժին ինկած ժամերուն չաւելցնես աշխարհի թշուառութիւնն ու վիշտը, այլ՝ ժպիտով ընդունիս անոր անսահման լոյսն ու խորհուրդը:

ՌԻԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ

Աշխարհահռչակ գրող Ռիլիըմ Սարոյեանը՝ համաշխարհային գրականութեան, քսաներորդ դարի ճակատը դարդարող հինգ պայծառ աստղերէն մէկն է: Աշխարհի գրականութիւնը Սարոյեանի ստեղծագործութիւններով դարձաւ աւելի մարդասէր, աճեց խիղճը, լցուեցաւ՝ ժպիտով, ողորուեցաւ՝ բարիութեամբ, բարիութեամբ եւ նորէն բարիութեամբ: Հսկայ է Սարոյեանը արուեստի մէջ, եւ բարի՝ հսկայ: Թէ ո՞վ է գրականութեան համար Սարոյեանը, ադ այլ հարց է, իսկ մեզ համար՝ Սարոյեանը...



Ռիլիըմ Սարոյեան եւ Փոլ Գալինեան

Լուսանկարիչ Փոլ Գալինեանի վաւերագրական ֆիլմին մէջ լուսանկար մը կայ, որ կը պատկերէ Սարոյեանը՝ պզտիկ քարի մը նստած, իսկ հետուէն կ'երեւայ Արարատը: Միայն այս պատկերը կը բաւէ, որ հասկնանք թէ ո՞վ է Սարոյեանը: Մեր ազգի երկու Արարատները: Երկուսն ալ Մեծ, երկուսն ալ մեր լինելիութեան կնիքը, երկուսն ալ կարօտակէզ ու մենակեաց:

Մեզ Արարատով կը ճանչնան աշխարհի մէջ, կը ճանչնան նաեւ Սարոյեանով: Ծիշա է, որ ան անգլերէն գիրերով կը գրէ, բայց հայերէն է ոգին, հայերէն է մտածողութիւնը: Սարոյեան բազմիցս յայտարարել է ի լուր աշխարհի. «Ինքզինքն պարտական կը զգամ աշխարհին յայտարարելու, թէ ամէն բանէ առաջ ես հայ եմ. եւ ան որ հայ ազգը չի սիրեր, թող գիտնայ, թէ ես ալ այդ ազգին վաւակն եմ: Կեանքը որմէ կը Բաղեմ իմ գործերուս նիւթը՝ սովորիկան է, լեզուն, որ կը գրեմ անգլերէն է, իսկ ոգին որ կ'ապրիմ՝

հայկական է»:

Ուշադրութիւն դարձնենք, որ Սարոյեանի առաջին ստեղծագործութիւնները հրատարակուեցան «Հայրենիք» հայատառ-անդլիատառ թերթի մէջ, որ անմիջապէս գրաւեց օտար լրագրողներու ուշադրութիւնը եւ օտարներն ալ տպագրեցին անոր գործերը: Իր առաջին գործերով՝ արդէն Սարոյեանը կը ներխուժէ գրականութեան մեծ աշխարհը, իսկ առաջին դիրքով՝ համբաւ ու մրցանակ կը շահի:



Չախէն աջ՝ Աղեմա. Հ.Բ.Ը.Մ.-ի վարչութեան ատենապետ տիար Սարգիս Վարձպետեան եւ իր տիկինը՝ Մակի, ֆիլմի հեղինակ տիար Փոլ Գալինեան եւ իր տիկինը՝ Արաքսի, Աղեմա. Հ.Բ.Ը.Մ.-ի պատուոյ նախագահ տիար Վահան Ալեքսանեան

Հայ լրագիրն էր, որ տարիներ առաջ ներկայացուց սկսնակ գլորողին, իսկ այսօր, նորէն՝ Հայ լուսանկարիչը կ'անմահացնէ անոր կեանքը, գործը, խօսքը, ձայնը, պատկերը, յիշատակը՝ եւ՛ ֆիլմով, եւ՛ լուսանկարով, որ գրուեցաւ գրողմաթուղթին վրայ՝ հրատարակուած Ամերիկայի եւ Սովետական Միութեան կողմէ:

Փոլ Գալինեան ըլլալով լուսանկարիչ, եւ ո՛չ սովորական, այլ գեղարուեստական, եւ հոգեբան եւ մեծ սէր ունենալով Սարոյեանի հանդէպ՝ ստեղծել է ֆիլմ մը, որ արժանի է Հայ ազգի այն զաւակին, որ համաշխարհային ճանաչում ունեցող գրող է: Ֆիլմը կ'ընդգրկէ բազմաթիւ լուսանկարներ, գրողի ձայնը եւ անոր արդէն թեւաւոր խօսքեր դարձած միտքերը, որ կը հնչեն էքրանէն.

«Բարին փնտռէ՛ ամենուրեք ու երբ զայն գտնես յայտնաբերես, ի լոյս աշխարհի քե՛ր զայն իր թափստոցէն՝ եւ թող ան մնայ ազատ ու համարձակ»:

Աղեքսանդրիա

ԱՆԺԻԿ ԿԱՆԻՄԵԱՆ

(Շար. 1)

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԲԱՐԻ ՀՍԿԱՆ

«Արիամարիէ՛ չարիքն ու անազնուութիւնը, բայց երբեք՝ չար եւ անազնիւ մարդիկը»:

«Գործս գրել է, բայց իսկական գործս ըլլալ է»:

«Ոչ ոքէն եղիր ստորագաս եւ ոչ մէկէն ալ գերադաս»:

Մեծ է Սարոյեանը, բայց շատ կը բարկանար, կը նեղուէր, երբ զինքը կը մեծարէին: Չէր ընդունի ոչ մէկ մրցանակ ու պարգեւ: Եթէ կենդանի ըլլար Սարոյեան, չի պիտի թոյլ տար այս ֆիլմի ստեղծումն ու ցուցադրութիւնը: Ֆիլմը տեսակ մը պարգեւ է մեծանուն գրողին, յարատեւ հայուն:



Չախէն աջ՝ Աղեֆս. հոգեւոր հովիւ Արթ. Տ. Գրիգոր Քինյ. Մուրատեան, Աղեֆս. Հայ Աւետարանական համայնքի հոգեւոր հովիւ Վերայ. Վահրամ Խունկանեան, Աղեֆս. Պատ. Քաղաքական ժողովի ատենապետ տիար Մկրտիչ Խաննեան եւ իր տիկինը. Պատկ. Թեմական ժողովի անդամներ՝ տեարթ Գէորգ Փիլիկեան եւ Մանուկ Գալփաֆեան:

Փոլ Գալինեանը իր արժէքաւոր ֆիլմով աշխարհին, նաեւ Հայաստանին ի ցոյց դրաւ Սարոյեան մարդու եւ գրողի կեանքը, դործը, իր ընտանիքի, նաեւ իր ժողովուրդի պատմութիւնը:


Այս ֆիլմը տեսնելու հաճոյքը ունեցանք Մայիս 13-ին Աղեքսանդրիոյ՝ Հ.Բ.Ը. Միութեան շնորհիւ: Ֆիլմի ցուցադրութիւնը եւ ֆիլմարտադրողի հետ հարցազրույցը կազմակերպել են Այեքսանդրիոյ Հ.Բ.Ը.Մ.-ի վարչութիւնը եւ Արուեստի Թանգարանը:

Վարչութիւնը բարձր մակարդակով կազմակերպեց ցուցադրութիւնը եւ հանդիպումն ու գրոյցը հեղինակին հետ: Կատարուեց ձեռնարկի հանդիսաւոր բացումը, ապա կարդացին Փոլ Գալինեանի կենսագրութիւնը: Տեղեկացրին, թէ ֆիլմը շահել է վեց մրցանակներ Միջազգային ֆիլմերու փառատօններու մէջ: Հինգը՝ ֆիլմի արտադրողին եւ մէկը՝ հրաժշտութեան համար, ինչպէս նաեւ Ոսկեայ Մրցանակը որպէս լաւագոյն վաւերագրական ֆիլմ՝

Ֆիլատելիայի Միջազգային Ֆիլմերու Փառատօնին: Աստից նաեւ, որ ֆիլմը համաշխարհային համբաւի տիրացած, Pulitzer եւ Oscar մրցանակներու արժանացած եւ անոնք մերժած ու չընդունած, Ամերիկահայ գրող, թատերագիր, մարդասէր՝ Ուիլիամ Սարոյեանի կեանքն ու գործն է:

Սկսուեց ֆիլմը եւ էքրանից մեզ ժպտացին բարի հսկայի տխուր աչքերը: Գերեց բարութեամբ վարակող ժպտը: Ականջ շոյեց իմաստուն խօսքը, հարազատ ձայնը: Մեծ հաճոյք է ու տօն Սարոյեանի հետ ամէն հանդիպում: Երբ, կը գիտնայինք, որ Հայաստան է այցելելու Սարոյեանը, մեծ կ'ըլլար մեր ուրախութիւնը: Ամբողջ հանրապետութիւնը ցնծութեան մէջ էր, իսկ երբ հոն էր՝ տօն էր ամենուրեք: Հայաստանի ժողովուրդը պաշտանմունքի հասնող սէր ու ակնածանք ունի Սարոյեանի հանդէպ: Ամենուրեք շրջապատուած էր գրողներով, ուսանողներով, մտաւորականներով, ինչպէս ինքը կ'ըսէր «հայ մարդերով»: Կ'ըսէր նաեւ, որ իր կեանքի ամենէն երջանիկ օրերը Հայաստանի մէջ կ'անցնէ:

Հայաստանի մէջ թարգմանուել եւ հրատարակուել են իր բոլոր ստեղծագործութիւնները: Հայաստանի գրողներէն, մտաւորականներէն շատերը յուշեր, գիրքեր են գրած իր մասին: Ֆիլմարուեստի մէջ ստեղծուած են վաւերագրական եւ իր ստեղծագործութիւնների թեմաներով նաեւ պեղարուեստական ֆիլմեր: Թատրոններու մէջ կը բեմադրուէին Սարոյեանի բիէսները: Հայաստանի մէջ անցուցած օրերը՝ անմոռանալի յուշեր են ժամանակակիցներու համար, իսկ իր համար՝ ջերմ ու հարազատ միջնորդի մէջ ապրած օրեր:



Սարոյեան գրողի, մարդու, քաղաքացու, հայի հանդէպ ամէնքս պարտք ունինք: Փոլ Գալինեանը իր հրաշալի ֆիլմով կատարեց իր պարտքը՝ համամարդկային չափանիշներով օժտուած գրողի կեանքըն ու գործը դարձնելով շարժապատկեր: Ֆիլմը՝ հեղինակին հետ կը շրջէ աշխարհէ աշխարհ եւ Սարոյեանի լոյսն ու բարութիւնը կը տանի մարդկանց:

ԱՆՃԻԿ ԿԱՆԻՄԵԱՆ

Աղեքսանդրիա

(Վերջ 2)